

Տարեկան լինել 10 բաժնի, կէս տարեկան 6 բաժնի:
Ս անձին համարները 7 կողմէն:

Թիֆլիսում գրվում են միմիայն խաղաղաստան միջ:

Մեր հասցեն. Тифлисъ. Редакция «Мшакъ».
կամ Tiflis. Rédaction «Mschak».

Խաղաղութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(Քաջի կիրակի և տօն օրերից):

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լիցուով:

Յայտարարութիւնների համար վճարում են
խաղաղաշուր բաժին 2 կողմէ:

ՄՇԱԿ

ԻՄՈՎԱՆԻԱՌԻԹԻՒՆ

Առօրեայ երեւոյթներ.— Երեւոյթն ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նա մակ Հին-Նախիջևանից. Նամակ Զանգեզու-
րից. Ներքին լուրեր.— ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ.
Նամակ Թուրքիայից. Արտաքին լուրեր.— ԽԱՌՆ
ԼՈՒՐԵՐ.— ՀԵՌԱԳԻՐՆԵՐ.— ԲՕՐՍԱ.— ՅԱՅՏԱՐԱՐ-
ՈՒԹԻՒՆՆԵՐ.— ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Անլիական նա-
մակներ:

ԱՌՕՐԵԱՑ ԵՐԵՒՈՑՈՒՆԵՐ

Ամեն անգամ, երբ մեր ժողովրդի մէջ
տեղի են ունենում զանազան ընտրութիւն-
ներ, — երբ ընտրվում են զանազան պաշ-
տօնեաներ, լինի դա մի բարձր պաշտո-
նայ, ինչպիսին է կաթողիկոսը, թէ մի
հասարակ պաշտօնայ, ինչպէս օրինակ
տեսուչ, քահանայ, քաղաքագլուխ, հոգա-
բարձու, կամ պատգամաւոր, սովորաբար
այդ ընտրութիւնները աճող չեն լինում, և
ընտրութիւնից յետոյ սառնասրտութեամբ
քննելով զործերը և անձնաւորութիւնները,
մարդ այն համոզման է գալիս, որ առանց
սար ու ձոր ընկնելու կարելի էր ընտ-
րել անհամեմատ արժանաւոր, եռանդուն
և անձուէր մարդիկ, որոնք ամբողջ զիւով
բարձր կանգնած կը լինէին այն մարդ-
կանցից, որոնք ընտրվել և հասարակական
պատգամայ պաշտօնները զուլե են անցել...

Հետաքրքրական է իմանալ, թէ ինչով
կարելի է բացատրել այդ տուրք աւօրեայ
երեւոյթը.— միթէ նրանով, որ այս կամ այն
ընտրութեան ժամանակ, ընտրողների վրա
ծնունդ է լինում, և ընտրողական սկզբուն-
քը ազատ չը լինելով կողմնակի ճիշդմե-
րից, անընդունակ է դառնում բացարձակ
կերպով արտայայտելու ընտրողների կամքը:
Ոչ, կրանով բացատրել այն աւօրեայ երե-
ւոյթները, որ առհասարակ մեր մէջ տեղի
ունեցող զանազան ընտրութիւնները ընդ-
հանրապէս անաջող են լինում.— չէ կարե-
ւի, քանի որ հասարակութիւնը, շատ քիչ
բացառութեամբ, միշտ ունի ազատ կեր-
պով կատարելու այս և այն պաշտօնայի
ընտրութիւնը լինի դա քաղաքագլուխ,
տեսուչ, քահանայ, հոգաբարձու, պատգա-
մաւոր.— թէ նոյն իսկ կաթողիկոս և ու-
րիշ բարձր պաշտօնեաներ:

Ընտրողական սկզբունքի գործադրու-
թեան այդ տեսակ անաջողութիւնը մեր

մէջ պէտք է բացատրել նոյն իսկ մեր հա-
սարակութեան ունեցած հասկացողու-
թիւններով, և այն տեսակէտներով, որոն-
ցով մեր մէջ ամեն մի ընտրող ձեռնամուխ
է լինում ընտրութեան գործին:

Մեր ժողովուրդը, իրեն արեւելցի ժո-
ղովուրդ, զարեւրից ի վեր իւրացրել է այն-
պիսի հասկացողութիւններ, և հա-
յն անցքն և, որոնք նոյն իսկ պատմա-
կան կեանքի ընթացքում եղել են նրա
անբաժան յատկութիւնները, յատկութիւն-
ներ, որոնցով նա միշտ զեկաւարդել է, երբ
առիթ է ներկայացել մի ընտրութիւն ա-
նելու, կաթողիկոս կամ մի ուրիշ պաշտո-
նայ ընտրելու...

Եւ այդ ժողովրդի կարծիքով մի որ և է
պաշտօնի համար ընտրվելու ամենաառա-
ջին արժանաւորութիւններն են մարդու
հասակը, դիրքը, և հարստու-
թիւնը: Մտեք մեր գիւղերը, հետաքր-
քովեցէ նոյն իսկ ամենահասակեղանի
պիւղական ժողովրդի հայեացքներով, ծա-
նօթացէք քաղաքների կեանքի հետ, և
զուր կը համոզվէք, որ մինչև այժմ էլ
երբ մեր ժողովուրդը շատ առիթներ ունի
ընտրողական սկզբունքի գործադրութեան
համար, երբ թէ զարոցական, թէ եկեղե-
ցական և թէ հասարակական զանազան
պաշտօնների համար ընտրութեամբ են
ջոկվում զանազան պաշտօնեաներ, այդ
հայեցակէտը զեկաւարդ զեր է կա-
տարելու:

Արդ, միթէ հարկաւոր է ապացուցանել,
որ այդ մի սխալ, անմիտ, և նոյն իսկ շատ
միասնակար ու վայրենի հայեացք է, ո-
րից օգուտ գո՞ւնար մի սպասել, բայց որից
ստանալիք միտանքը անպակաս կը լինեն...
Կիցաւոր մի տեղ ուզում են ընտրել քաղա-
քագլուխ, և ահա ամենքն էլ արամադը-
ված են ձայն տալու նրան, ով որ աւելի
բարձր դիրք և աւելի կապեր ունի, և ո-
րի գլուխը արդէն ծաղաւ է... Կիցաւոր
մի ուրիշ տեղ զարդի համար հոգա-
բարձու պէտք է ընտրել, և ահա ամեն-
քը ձայն են տալիս մի այնպիսի ազայի,
որի գլխաւոր ոյժը իր փողն է, իսկ փորձ-
վածութիւնը նրա տարիքը: Քա հա-
յն աշտու ընտրելիս՝ զիւսաւոր արժա-
նաւորութիւններից մէկը ընտրվողը տարի-
քն է համարվում: մի որ և է պատ-
գամաւոր ընտրելիս ամենից առաջ աշ-

քի առաջ են ունենում նրա ինչպիսի ըն-
տանիքից և ինչ գիւղից մարդ լինելը: մի
որ և է գիւղում մէլ լիք ընտրելիս նախ
մտածում են այն մասին թէ արդեօք մէլի-
քի մազերը սկսել են ձերմակել, թէ ոչ, և
թէ արդեօք նա գիւղի հասարակ դա-
սակարգին է պատկանում, թէ ազգեցիկ
դասակարգին և այլն և այլն...

Կեկաւարդվում այդ տեսակ վայրերի հա-
յնացքներով մեր հասարակութիւնը իրան
նեղութիւն չէ տալիս, և չէ մտածում, թէ
միթէ հարուստ, բայց տգէտ հոգաբարձուն
իր փողերը զարդին պէտք է ընծայէ, միթէ
վաշխաւու երեցիփոքը կը խղճահարկի իր
փողերի հետ խառնել եկեղեցու փողերը,
միթէ մեծ կապեր ունեցող քաղաքա-
գլուխը կարող է մեծ խելք ունենալ, և
միթէ վերջապէս սպիտակ մազերի—
ազատականութեան մէջն է բովանդակ-
վում մարդու խելքը, եռանդը, շնորհը և
ընդունակութիւնը, որ զիցուք մի կաթո-
լիկոս, մի երեցիփոք, կամ մի ուրիշ պաշտո-
նայ ընտրելիս պէտք է ի նկատի ունե-
նել թէ սեւ, մօրուքը երկար է, թէ կարճ,
և կամ թէ առհասարակ մի որ և է հա-
սարակական բարձր պաշտօնի համար ըն-
տրվողը, խօսելով ժողովրդի լեզուով.— լա-
րօյ և բուսած՝ ունի, թէ արտաբնուստ
մի սովորական անձնաւորութիւն է...

Եւ ահա այդպիսի անմիտ հայեացքների
զերի զործած լինելով, մեր հասարակու-
թիւնը իր ընտրողական գործերի ժամա-
նակ մեծ անաջողութիւնների է հանդի-
պում, աշխատելով միշտ այնպիսի մարդիկ
ընտրել, որոնց արժանաւորութիւնը ոչ թէ
նրանց խելքը, գիւղական լինելը, և եռան-
դը, պատրաստակ ունեւթիւնն է, այլ
այնպիսի մարդկանց, որոնց զիւսում խելք չը
կայ, բայց զբաւանում փող կայ, որոնց ոյժը
ոչ թէ իրանց անձնական արժանաւորու-
թիւնների մէջն է, այլ նրանց ունեցած
կապերի, դիրքի և վերջապէս հա-
յնացքների այն երեւոյթը, որ մեր հասա-
րակութեան մէջ մինչև այժմ էլ ընտրողա-
կան ասպիւղը միայն չէ սպիտակ մազե-
րաւոր հաստափոր բուրժուականներին, աղան-
քին և զիւր ունեցող անձանց, մի խօսքով
աւելի հին սերնդի ներկայացուցիչներին,
որոնք և հալածում և զուրս են քը-
շում ասպիւղից ամեն տեսակ նոր մարդ-

կանց, որոնց ոյժը ոչ թէ փողի և դիրքի
մէջն է, բայց իրանց անձնական արժանաւո-
րութիւնների մէջն...

Սակայն, կեանքը, փորձերը և իրակա-
նութիւնը արդէն ապացուցին, որ այդպի-
սի անմիտ և վայրենի հայեացքներով զե-
կաւարդվելով չէ կարելի ոչ մի միթէարա-
կան հեռանկարի համար: Կրան սպացոյց
մեր բոլոր հասարակական հիմնարկու-
թիւնները: Եւ այժմ արդէն ժամանակ է
ասպարէզը թողնելու այն մարդկանց, ո-
րոնց արժանաւորութիւնը փողի, դիրքի
և սպիտակ մազերի մէջն է, համոզվելու
համար, որ փողը արժանա-
ւորութիւն չէ, որ դիրքը եռանդ չէ
նշանակում, և որ սպիտակ մազերը— խե-
լքութեան նշան չէ...

Խ. Մ.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ՀԻՆ-ՆԱԽԻՋԵՒԱՆԻՑ

Յուլիսի 28-ին

Հին-Նախիջևանի իր արտաքին տեսքով շատ
նմանում է պարսկական քաղաքի, իր մէլանով,
բազարով, բարձր մզկիթներով ու միւսերնե-
րով: Տեսքը վատ են և պարսկական ձևով շինած,
փողոցները կեղտոտ և շատ անգամ այնքան նեղ,
որ մի ֆայէտն չէ կարող անցնել: Մտնելով
բազարը, դուք անցնում էք նեղ ու մութ չար-
տուներով: շատ անգամ ձեր ոտների տակ փռած
էք տեսնում եղան և զանազան անասունների
կաշիներ, որից կաշեգործները տեղական կօշիկ-
ներ են պատրաստում և այս կաշիներից սարսա-
փելի հոտ է գալիս: Չարտուների տանիքները
կամարած են, խառնութիւնը փոքր ու մեծ մա-
սամբ մութ: Կիտողը մի փողոց չի տեսնի, որ
քարած լինի, մի տուն չի տեսնի, որ կտուրը
թիթեղածածկ լինի:

Հին-Նախիջևանի ազգաբնակչութեան մեծամաս-
նութիւնը կազմում են թուրքերը, փոքրամաս-
նութիւնը՝ հայերը: Տեղացի հայերը պարսկաւոր
են զիւսաւորական առևտրով: Ապրանքը բե-
ւում են Մոսկվայից, Թիֆլիսից, Օդեսայից և
Ռուսաստանի միւս վաճառաւոր քաղաքներից:
Ինքած ապրանքները վաճառում են զուաւոր ժո-
ղովրդի վրա: Ցարուց տարի վաճառականների թի-
ւը աճելով աճում է մեղանում, որովհետև ում

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԱՆԳԼԻԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Valeat quantum valere potest

I

Առիթ ունեցած լինելով երկար տարիների ըն-
թացքում անձամբ ծանօթանալու Անգլիայի կեան-
քին, մենք դիտաւորութիւն ունենք «Անգլիական
նամակներ» խորագրի տակ մի շարք յօդուածներով
ծանօթացնել հայ ընկերայից հասարակութեանը
Անգլիայի և անգլիացիներին հետ, խօսե-
լով անգլիական կեանքի նշանաւոր երեւոյթների,
անգլիական լուսաւորութեան, հասարակական,
ընտանեկան կեանքի, երկու սեռի դաստիարա-
կութեան, կառավարութեան և ուրիշ հետաքրքրա-
կան խնդիրների մասին: Մեր յօդուածների շար-
քը վերաբերվում յատկապէս Անգլիային և անգ-
լիացիներին՝ կը կազմէ մի ամբողջութիւն: Հէնց
այդ մի օղջութիւնը աշխարհում առաջ ունենա-
լով, մենք այս անգամ ամենից առաջ կը հաղոր-
դենք Մեծ-Բրիտանիայի մասին մի քանի պատ-
մական կարճ տեղեկութիւններ:

Մեծ-Բրիտանիայի պատմութիւնը սկսվում է
մօտ երեք հարիւր քառասուն տարիներ Բրիտան-
սից առաջ: Այս առանձնացած կղզու արտաքին
աշխարհի հետ ունեցած յարաբերութիւնն էլ ա-
ռաջին անգամ սկսվում է մի լուր՝ փրկելիցի-
ների այցելութեամբ: Նախին բրիտանացիները շատ
պատերազմաւոր և քաջ մարդիկ էին, բայց բոլ-
րովին անտաշ և անընդաքսիկ: Կրօնի մասին
ընկերները շատ վերացական գաղափար ունէին,
ըստ որում նրանց մէջ թաղաւորող կրօնն էր
դրուիդականութիւնը, այսինքն կաղնապաշ-
տութիւնը, ինչպէս ցոյց է տալիս դրուիդականու-
թիւն լուրը, որ եւրոպէական ըրուիդականութիւն
լուրից և նշանակում է կաղնի Կրօնից կոչվող
ըրուիդական վարդապետները ընտրվում էին եր-
կու սեռից և զրանց անմիջական հսկողութեան
տակ էին կրթվում երիտասարդները, մինչդեռ,
ընդհանուր մտքով, զրուիդները կաղնում էին եր-
կրի օրէնքները մարմնը, ինչպէս և այլ հերոսա-
կան հասակի քաղցրութեամբ աշուղները: Առաջին
դարում՝ Յուլիոս Կէսար արշաւելով դէպի Բրի-
տանիա, հաստատեց այդտեղ հռոմայեցիների
յաղթական արքայատէրութիւնը, որը շարունակ-
վեց մինչև Նիւդեբորդ դարու սկիզբը, այսինքն
մինչև այն յիշատակալի դէպքը, երբ կատաղի վա-
ղախները սպառնում էին գրաւել Հռոմ քաղաքը և
հռոմայեցիները ստիպվեցան հրաւեր կարգաւ ի-

րանց զօրքերին, որ թողնեն օտար երկրները և
միահամուտ կերպով զիւնեն հայրենիքը պաշտպա-
նութեամբ: Հռոմայեցիների աղեղնութիւնը առ-
հասարակ քաղաքային է համարվում քանի մի նոր
պատմաբանները, բայց ուրանալ անկարելի է
թէ Բրիտանիայում ինչպէս ըրիտանութեան
լոյսի ներմուծողը, այնպէս և հարտաբարպետու-
թեան ու ուրիշ շատ օգտակար արհեստների
հատաւորող հռոմայեցիներն էին:

Զարթոյց դարի սկիզբից սկսվում է, այսպէս
անուանելով, «Սաքսոնեան դարերը», որը շա-
րունակվում է մինչև միտասնիկորդ դարը: Յիւ-
տեր, անգլիկ և աքսոններ թողնելով արևմտեան
Եւրոպա, հերթով չուեցին դէպի Բրիտանիա և
նեւաճելով Ռոմանո-Բրիտանիա, բաժանեցին եր-
կրի հարաւային կողմը եօթն մասերի, որոնք բոլ-
րը միասին կոչվեցան Անգլիա, անգլիկ տարրի
անունով, որոնք բռնած էին երկրի հարաւ-արեւե-
լեան բերրի և հարուստ մասը:

Մետասնիկորդ դարից սկսվում է «Նորման-
դական դարերը»: Նորմանդիայի Ռուլլիամն
(Անգլիայում Ռուլլիամ առաջին) խաթուրութեամբ
բարձրադասով անգլիական գահը, այդ երկ-
րի մէջ մտցրեց նորմանդական սովորութիւններ
և նորմանդական լեզուն, որը ոչ այլ ինչ էր եթէ
ոչ ազաւաղած ֆրանսերէն:

Ռուլլին նորմանդական դարերը անուն
ամենա-

ծանր աղեղնութիւնն եղաւ անգլիական լեզուի
և գրականութեան վրա, որը այդ ժամանակ դար-
ձել էր մի տեսակ մեղեդական խառնուրդ՝ ըրի-
տանականի, ֆրանսերէնի և լատիներէնի: Ռուլ-
լիամն փոխարինող Հենրիկոս երկրորդից սկսվում
է Պլանտադենի տոհմը: Ապրանքը բե-
ւում են Մոսկվայից, Թիֆլիսից, Օդեսայից և
Ռուսաստանի միւս վաճառաւոր քաղաքներից:
Ինքած ապրանքները վաճառում են զուաւոր ժո-
ղովրդի վրա: Ցարուց տարի վաճառականների թի-
ւը աճելով աճում է մեղանում, որովհետև ում

ձեռքը որ ընկնում է մի երկու հարիր բուրբուխ և անուշ իր սեփական խառնուրդը, այն- պես որ գնդակները, կամ ուրիշ խոսքով մուշտա- րիկները թիւր վաճառողներից դուրս շատ վաղը թույլ աւելի կտրելի է հաշուել: Վաճառականնե- րը իրանց առևտուրը կատարում են հին, նահա- պետական ձևով, առանց կանոնաւոր հաշուա- պահութեան թէպէտև նրանք գնում են Ռու- սաստանի փողը ի շատէ լուսաւորված քաղաք- ները, սակայն նրանց կարգերը, սովորութիւննե- րը բնաւ չեն ընդունում, այնքան խոր արմատ- ներ է գցել սրանց մէջ հնամուլ նահապետակա- նութիւնը: Հին-Նախնականի առևտրականները լիւրտ են չափազանց, կամ ինչպէս իրանք են ասում լայնորդ են, և այդ ժպտութիւնը իրանց համար պարծանք համարելով, մէկը միւսից աշ- խատում է գերազանցել այդ տղեղ յատկութեան մէջ: Գլխաւորութիւնը ծագում է մարդատեցութիւնը, որի հետևանքն է անտարբերութիւնը դէպի չքաւոր մարդկանց թշուառ վիճակը: Մեր վաճառական- ները համարենա չը գիտեն ինչ բան է բարե- գործութիւնը, մարդասիրութիւնը:—Ինչո՞ւ, որով- հետև նրանք խեղդված են իրանց անձնական նիւթական հաշիւների մէջ: Եստակութիւնը տի- րել է նրանց ամբողջ գոյութիւնը վրա: Մեր ա- ռևտրականները վաճառականութեան վարկն են ձգում, որովհետև դրանցից շատերը ինչ տեսակ կեղտոտութիւններ ասէք անում են, մէկ-մէկուց մուշտարիկներ խլում, մէկ մէկու ջիւղում է ժան ծախում, մի խոսքով խեղդում են և մուշտարիկնե- րին և միմեանց:

Նախնականից հարուստ հայը չէ սիրում օգնել իր աղքատ բարեկամին, շատ անգամ չէ կամե- նում ճանաչել նրան: Նրա դռները փակ են աղ- քատների համար: Նրա ձեռքը առատ չէ աղքա- ղուտ գործերի համար: Գիցուք պատահում է մի օր եւ է հասարակական թշուառութիւն և ահա այստեղ են մենք նկատում ենք նոյն անտարբե- րութիւնը: Մեր քաղաքում չենք գտնում գոնէ մէկ հայ առևտրական ընկերութիւն:

Մի քանի խօսք արհեստների մասին: Մեր ար- հեստագործները նոյնքան հին են, որքան հին են իրանց արհեստները՝ ինչ որ չինում են բոլորը հին ձևով և անդրձեռնդեղանց գործիքներով, այդ- պէս են սակերիները, քարերիները, դերձակները, հիւանդները և օրմնադիրները: Մի քանի ստաղծա- գործներ և դերձակներ կան միայն, որոնք նոր ձևի արհեստ են ուսել Թիֆլիսում: Սակայն ընդ- հանրապէս մենք չունենք նոր արհեստագործներ: Տեղացի հայերը իրանց ընտանեկան ներկայա- նում են մեր առաջ ընտանակ, անգույն և իշ- խող, սրանց աչքում կինը՝ համարվում է ստոր արարած: Հայ կինը մեղանում դուրս է ամեն տեսակ իրաւունքներից, հայ կինը իր մարդու ճորտն է այստեղ: Իրանց կանանց տեղացիք պա- հում են ստրկական դրութեան մէջ, ինչպէս առ- հասարակ արեւելքում, տեղն ընկած ժամանակ խոյս չեն տալիս և նրանց ծննդից: Այդ մարդը իր կնոջը ամբողջ տարիներ չէ թողնում անից դուրս գալ: Եթէ պատահում է ձեռք տեսնել տե- դացի հայ կնոջ մի տեղ գնալիս, անպատճառ

դուք նրան կը տեսնէք ոտից մինչև գլուխ ճե- րմակ չարաւտով ծածկված: Գործերով ապրելով խաւարումով թուրքերի և պարսիկների մէջ, տե- դացի հայերը ընդունել են շատ բան նրանցից: Իսկ օրիորդը, աղջիկը... չէ գառնում նա 10 12 տարեկան և նրա համար անդառնալի կեր- պով անցնում են մանկական ուրախ և անմեղ տարիները, նա ևս իւր բ թէ «մարդացու» փակ- վում է տան մէջ: Կանայք և չափահաս օրիորդ- ները տղամարդկանցից փախչում են: Եւ եթէ պատահում է, որ ձեր առաջ չընտէր է կամ նը- տած է մի կին, շատ անգամ և բարեկամ և տա- րիքով մեծ ձեռքանից, նա երեսը ծածկած ունի քողով խաւարածները առևտրում են, որ դա լաւ է, ամօթխաճութիւնն է պահանջում, թէ կը- նոջը վայել չէ երեսը բաց անել, խօսել տղա- մարդկանց հետ: Բայց ինչ որ այսպիսիները վա- րագործում են կնոջ պարկեշտութեամբ, մենք բացատրում ենք տղիտութեամբ և պարսկական ստրուկ, փակված կեանքով, որից առաջանում են այդ տեսակ տղեղ կեղտոտ սովորութիւններ: Կինը խուսափում է մարդուց, մարդը կնոջից: Յաճախ արդէն պատկանում ամուսիններ կարող էք տեսնել, որոնք իրար հետ նոյնպէս չեն խօսում և որքան ժամանակ—4, 5 տարի: Այս բոլորի հետևանքը լինում է այն, որ մէջտեղ խաղաղ, երջանիկ ըն- տանական կեանք չէք տեսնում: Մայրերի ան- կիրթ լինումը պատճառով, երեխաներն էլ ան- կիրթ են լինում: Այսպիսի մայրերը իրանց երե- խաներին բամբասանքներով, հայոյանքներով ծննդով և անէջքներով են կրթում միայն և դարձնում չէ, երբ նրանք փչանում են Մեղա- նում օրիորդները իրանց ամուսիններ ընտրելու համար: ազատութիւն չունեն, սակայն ինչ կեր- տասարդի գլխին կը կապեն աղջկայ ծնողնե- րը, նրա կինն է դառնում օրիորդ: Ի հարկէ ծը- նողները մեղանում առհասարակ այնպիսի մար- դու գլխին են կապում, որից գիտեն, որ կարող են չահել, կամ օրը փող ունի, թէպէտև մարդը լինի 40—45 տարեկան: Բայց, ի հար- կէ, այսպիսի պատկերը դառնում են անվեր- ջանալի ընտանեկան երկպառակութիւնների աղ- բեր: Մեղանում երեք կանանց և օրիորդներին հանդէսներում, ընտանեկան երեկոյաններում չէք տեսնել... Կարծես հայ կինը այստեղ ծնված է ծը- նելու համար, այստեղ կնոջ միջնորդութիւնը իր թանկագին մատանիները, ապարանջանները և դերձակներն են, հայ վաճառականը այդ դէպքում փող չէ խնայում և սովով ուրախացնում է իր կնոջը: Մեր քաղաքը դուրս է փախ ի շատէ ու- սում առած կանանցից, կան գրել կարգալ լուսնող ջահիլ կանայք, և օրիորդներ, որոնք տեղական օրիորդական դպրոցի տասն տարեկա գոյութեան պատճառն են:

ՆԱՍՏԱԿ ԶԱՆԳԵՂՈՒԹՅՈՒՆ

Յուլիսի 25-ին

Ձանդեղուրի գաւառը, որը բաղկացած է 300-ից աւելի հայաբնակ և թուրքաբնակ գիւղերից, իր

կենտրոն Գորիսի մէջ ունի միայն մի գիւղական և մի գաւառական բժիշկ: Հետեւաբար ինչպիսի պարտաճանաչ և գործունեայ բժիշկ գալու էլ լինի այս գաւառը, նա անկարող կը լինի էական օգուտ տալ ահագին տարածութիւն ունեցող գաւառի ժողովրդեան, մանաւանդ ներկայ անբարեկալ ու հանգամանքներում, որոնցից մէկն է և ճանա- պարհների դժուարագնաց լինելը: Մեղրիի Գիւ- նէյ-մահալը բաղկացած է մօտաւորապէս 1,400 ծխից կամ 7000 բնակչներից: Ձանդեղուրի մի մասը կազմելով, հեռու է Գորիսից 120 վերստով, անջատված Գլխալու և Գլխալան տարերով: Այդ մահալին հարկաւոր է մի թիւիս ղեղապետը իր բժիշկով, որովհետև մեղանից շա- տերն օգնութիւնից դուրս մնալուց մեղանով, հա- տարակոթեան վրա մի անտանելի ծանրութիւն են թողնում, այն է՝ այրի կանայք և շատ որդեր: Այդպիսի անխնամ ու անդատարակ թողնված որդերը, ինչպէս ցոյց են տալիս փաստերը, չա- փահաս դառնալով, լինում են մեծ մասամբ բա- րոյապէս փչացած մարդիկ և խաղաղասէր բնա- կիչներին մեծ տանջանքներ ու հոգսեր են պատ- ճառում:

Վերոյիշեալ Գիւնէյ-մահալի կենտրոն Մեղրի գիւղում լինելի բժիշկին իր ղեղապետով մեծ օ- գուտ կարող է ցոյց տալ:

Մի օրինակ, դիցուք թէ ձմեռ ժամանակ մէկը հիւանդացի է վարակիչ կամ մի այլ հիւանդու- թիւնով, իսկ հիւանդացիները համոզված լինելով, թէ կարող է օգնութիւն հասցնել իր հիւանդին, որով և ազատել մի ահագին ընտանիք սովից: մեղանիցից և այլ հոգսերից, կամենում է ան- պատճառ ոյժից վեր ծախսեր անել ու հիւանդին բժիշկ հասցնել, միթէ կարող է նա իր մտադրածն իրագործել,—երբեք, որովհետև խոչընդոտը մէկը չէ, որ ամբողջ ոյժով մարտակող հասնէ իր բաղ- ձանքին, այլ նրա արգելադրութիւնը բազմաթիւ- նեն, որոնց մի քանիսները միայն առաջ կը բե- րենք այստեղ: Նախ գիւնէյցին մինչև բժիշկի մօտ հասնելն ու վերադառնալը պէտք է 240 վերստ ճանապարհ կտէ, ուրիշ մի շաքարովայ տան- ջանք: Հիւանդացիները արքան մեծ թիւով ունեցող մէկը պիտի լինի, որ իր տունն ու հիւանդը թող- լելով Ուրիշի յուրով, գնայ Գորիս բժիշկի հաս- վելու: Յայտնի բան է, որ մի շաքարովով անխնամ թողած հիւանդին նա կը գայ և գերեզմանում անվրդով պառկած կը գտնէ: Միւս կողմից ան- հաւան է հիւանդին տանել Գորիսի հիւանդանոցը, նոյն իսկ հիւանդի գլուխով իր կախումն ունեցող պատճառներով: Պէտք է նկատի ունենալ և այն, որ գէպի Գորիս տանող վերոյիշեալ ուղիների ճա- նապարհները, ձմեռվայ եղանակին մեծաքանակ ձիւնի պատճառով, ամառներով փակ են մնում: Վերջապէս, դիցուք թէ հիւանդը կը տանի իր հիւանդութիւնը մինչև բժիշկի հասնելը, բայց մի- թէ հիւանդացիները Գորիս հասնելուն պէս, այդ աղաւթի հիւանդակին, բժիշկին կարող է այնտեղ գտնել և նպարտ: Գիցուք թէ, հաւանաբար դէպ- քանից մէկը լինելով, բժիշկին աջողկեց այցելել գիւնէյի հիւանդին, նա ինչպէս կարող է մար- գարկոնալ և հետո տանել հիւանդին բժիշկող դե-

ղերն ու գործիքները: Միւս մանրամասնութիւն- ների մէջ չենք մտնում:

Վեց տասնաւորական հասարակութիւններից բաղկացած Գիւնէյ-մահալի մի հասարակութիւնն էլ Մեղրի գիւղը լինելով, ունի 1,000 բնակիչ, ո- ռոնց մէջ կան 90 այրի կանայք և 10-ից աւելի նոյն իսկ իր միջից երկրորդ պատկի ենթարկված են ուրիշ գիւղացիների հետ կամ ուրիշ գիւղերից մտել են այս Մեղրի գիւղը: Մնացած հինգ շի- նական հասարակութիւնների այրի-կանանց մա- սին ճիշդ ստատիստիկական տեղեկութիւն չունե- նալով, համարում թւանշանով 1,000 բնակչներին 50 տոկոս այրի-կանայք ենք նշանակում: Ուրե- մըն Գիւնէյում կան 400 այրի-կանայք, որոնցից մի քանորդին կարելի է ծննդականութեան ան- ընդունակ համարել, իսկ երեք քանորդին ամենա- թաւ հասակում պէտք է հաշուել: Միջինը դրան- ցից իւրաքանչիւրը կնոջ վայել կեանքն ապահայ թողած, տան ամեն հոգսերն առած իր օսերին, հերոսաբար տանում է տաժանակիր կեանք, և վայ այնպէս պահելուն, որ նա պահում է մի խումբ որդեր:

Կրկնում ենք, վերոյիշեալ անբարեկամ լուսն պատճառները Գիւնէյի վատաւոր լինելուն և բժշկական օգնութեան բացակայութիւնն են: Եթէ գիւնէյցին ունենայ բժիշկ և ղեղապետ, հա- լատարացած պէտք է լինել, որ անբարեկաման դէպքերը կը պակասեն և ժողովուրդը ղեղալի կրկնով կաճէ, մոտաւորապէս, որ օտարութիւն գնալը մեղ մօտ մի տեսակ կենսական պահանջ է դարձել հողի պակասութեան և բերքից ընկնե- լու պատճառով: Բանը նրանումն է, որ օտարու- թիւն գնում են թէպէտ զատարկ գրպանը լցնե- լու յոյսով, բայց արգանք առողջ կազմաւորելով, իսկ վերադառնում են ու ձվ գլխէ ինչպիսի գրպա- նով, բայց ըստ մեծի մասին մի օր և ից վարա- կիչ հիւանդութեամբ:

Բժշկական օգնութիւնից դուրս գիւնէյցին հի- ւանդութիւնից ազատվելու համար իրան յանձ- նում է բազմի բերմանը: Եւ շատերը մատաղ հասակում մեռնում են: Այդ է պատճառը, որ Մեղրիում ծերունի մարդ չը կան: Շինական ժո- ղովներում ղեղալի կերպով աչքի են ընկնում նոր մարդիկ, կորցրած հեծրի թաւը, առոյգ և պարթի կազմաւորված Նոյն գրովան մէջ է ամ- բողջ Գիւնէյն: Գիւնէյ մահալում բժիշկ և ղեղապետ ունենալը բոլոր գիւնէյցիների տե- նանքն է, որի վրա հարկաւոր է ուղարկու- թիւն դարձնել:

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Մեկ հաղորդում են, որ Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի դրաղարանը ամենադժուրին վիճակի մէջ է: Գրադարանը, որի համար դպրոցը վաղուց արդէն իւրաքանչիւր տարի ահագին գումարներ է ծախել, փոխանակ հարստանալու, աւելի է աղքատանում: Ամենահազուադուտ և ամենա- թանկագին դրքերը այս և այն մարդու, վարժա-

յում Օրլէանների և Բուզարդացիների մէջ տեղի- քը ունեցող սաստիկ տեղեկութիւն, Հինբիկոս Վե- ցերբերդի որ ընկ պատճառ չէր եղած այդ տե- լուքեան, որպէս էր նուաճել ամբողջ Ֆրանսիան, բայց յանկարծ երևան ելաւ Ժաննա-դ-Արկ, մի գիւղացի օրիորդ, որ վերջ տուց անդլիացիների աշխարհակալութեան: Ժաննա-դ-Արկ իր աղքատ սիրական ոգևորման մէջ հաւատում էր թէ եր- կինքն էր նշանակել նրան ազատել Ֆրանսիան և այսպէս էլ համոզել կարողացել էր իր թագա-ւորին: Օրլէանները պաշարված էին և ուարժա- ւորում էր ամբողջ Ֆրանսիայի վրա, երբ Ժան- նա-դ-Արկ մի խումբ քաջերով յարձակվեց թշա- մու բանակի վրա և աղաւթը Օրլէաններին, յե- տոյ Բէյնում օժնել տուաւ Կարոլոսին իբրև թա- դաւոր Ֆրանսիայի, բայց չուտով վաճառվելով իր արիւնակիցների մատնիչ ձեռքով, տարիցու- անդլիացիների բանակը: Եթէ անգլիական պատ- մութեան մէջ կան այնպիսի կետեր, որոնք յա- լի տեսական ամօթ են թողնում անգլիացիների վրա, այդ կէտերից ամենախաղաղը թէ ան- գլիկութիւնը, որով նրանք վարկեցան Ժաննա- դ-Արկի հետ: 1431 թւականին, Րուէն քաղաքում Ժաննա-դ-Արկի անխիղճ թշնամիներն այրեցին նրան Րուէնի շուկայում, յամօթ տասնհինգերորդ դարի լուսաւորութեան:

Յիւսեր, անպէր և սաքսոններ ի մի ձուլվե-

լուց և նախնի բրիտանացիներին ձնշուրց յետոյ, քէլչ նեղութիւնների չնթարկվեցան դրանք վայ- րի ճիւղաշարից և Վլադիմիրից, որոնք ժամա- նակ տաճառմանով յարձակվելով հիւսիսային Անգլիայից, մեծ վնասներ էին հասցնում նորեկ գաղթականներին: Սկստները, որոնք այժմեան չօտյանգացիներն են, ունէին իրանց յատուկ թա- դաւորը և ընդհանած էին քրիստոնէութիւն, երբ Ուլիսիւս Երկրորդ, չը կարողանալով այլ ևս համ- բերել նրանց հրօտակները անվերջ շահառակու- թիւներին, պատերազմի ելաւ և 1093 թւակա- նին յաղթեց չօտյանգացիներին և օպանեց նը- մինչև տասնհինգերորդ դարը չօտյանգացիները քաջութեամբ պատերազմեցին անգլիացիների դէմ և 1328 թւականին վերահաստատեցին կառա- ղում անկախութիւն, սակայն ձէջմա Առաջին 16-րդ դարի վերջերում միացրեց այդ երկրի գահը անգլիական գահի հետ և վերջապէս 1707 թականին, Աննա թագուհին միացնելով երկու երկրներին պարզամէնաները, միանգամայն վերջ տուց Ծոտյանգիայի աշխարհի քաղցին:

Ինչ որ վերաբերում է Իրլանդիային, որը բա- ժանված է Անգլիայից և Ծոտյանգիայից, պէտք է խոստովանել թէ հին ժամանակներում Իրլանդի- ան աւելի լուսաւոր էր, քան թէ իր հարևան կղզիները: Այս երկրի մէջ քրիստոնէութիւն տա-

բաժողն եղաւ Սուրբ Պատրիկը, և այժմ դեռ մնում են իրանդական լեզուով զրկւած քղաղի- քական ձեռագրեր, որոնք սակայն վնասու- ան թշնամիների յարձակմունքների ժամանակ: Իրլանդացիները կառավարվում էին քանի մի ցե- ղագեւանների ձեռքով և այդ ցեղագեւաններից իւ- րաքանչիւրն առ իրեն կերպով հպատակվում էր մի թագաւորին: Տասն և վեցերորդ դարում, ա- ռանց հաստատ պատճառների, անգլիացիները մտան Իրլանդիա և Գուլլին, Ուլսթոր ու Ռոթը- ֆորը ընկան անգլիացիների ձեռքը, քէլչ ժամա- նակից յետոյ երկրի բոլոր նահանգները հպա- տակվեցան Անգլիային, բայց Ուլսթորը, ուր սա- կայն երկու դար սրանից առաջ հաստատվեց անգ- լիական գաղթականութիւն և այսպիսով՝ ամ- բողջ Իրլանդիան նուաճեց: Իրլանդիայի վե- րաբերեալ անդլիական օրէնքներից ամենահետա- քերքին է Ֆոյնիպի օրէնքը, որ բաղկանում է յետագայ երեք կէտերից՝

ա) Իրլանդիայի մէջ չը պէտք է պարտադէմ կազմիլ առանց Անգլիայի թագաւորի համաձայ- նութեան:

բ) Իրլանդիայի մէջ իրաւունք չը կայ օրէնք հաստատելու առանց նախապէս այդ օրէնքը անգլիական թագաւորի քննադատութեան են- թարկելու:

գ) Անգլիական բոլոր օրէնքներն ազատ մտաք

ված բանի գործունեության մասին առհասարակ
ընտանոթական վրա, մանավանդ նախնային ար-
դիւնաբերության պէտքերի համար կրկնապատ-
կեց. 6 օգոստոսի Երեկ վերադարձաւ
արտասահմանից զինուորական միասնաբա-
նային զինվորական «НОВОСТИ» լրագրի հա-
տով վաճառելը նորից թողնուած է: Հրատա-
րակված են տարիքային հարցերի վերաբերմամբ
երկարամտային ներկայացուցիչների ժողովների
համար ժամանակագր կանոնները Երեկ կրկնա-
պատկեց: 6 օգոստոսի 10-ին
նշանակված է Բարձրագույն զորահանգին Երեկ
վախճանվեց կայսերական թատրոնների բազմաշ-
խատ արտիստ Լէօնիդով:

ԲԵԼԳՐԱԿ, 6 օգոստոսի: Միւսանը ուղեւորվեցաւ
Վիեննա:

ՊԱՐԻՋ, 6 օգոստոսի: Բուլանդէ, Դիլիւսն և
Բոշֆոր հրատարակեցին մի պրակամագիւտ, որի
մէջ ասում են. «Բարձրագույն ատենակի վճիռը
պատգամաւորների ժողովի և սենատի կայացրած
համաձայնութեան հետեանք է, որի զօրութեամբ
պատգամաւորների ժողովը պարտաւորվել է չը
լուծել սենատը: Մեր դէմ կայացած հարց ու
փոքրի հրէշաւոր հետեանք» բնականորէ ձայնա-
տաւթեան յողթվելն է. բայց կամայականու-
թեան, բարձրագույն և արկայնութեան այդ օր-
դան մտնելով է իր վախճանին: Չը նայելով
պետական յղափառութիւններին, որոնք պատ-
րաստված են միմեկեան մէջ, մենք հաւատում
ենք ընտրողների հատապատմութեանը:

ՎԻԵՆՆԱ, 6 օգոստոսի: Բէլգրադից եկած մաս-
նաւոր լուրերին նայելով, Միւսանը համաձայնվել
է, որ Նատալիա թագուհին տարին մի քանի ան-
գամ գալ Բելգրադ: «Neue Freie Presse» լրա-
գրին հաղորդում են Լոնդոնից, որ Անգլիան՝ ցա-
մաքային բարեկամ պետութիւնների հետ միասին
վճուկ են թիրախային համար ունեցող ֆինան-
սական աւելի կանոնաւոր վիճակ՝ աւելի լաւ
հակադրութեան ներքոյ: Այդ պետութիւնները եր-
կիւղ են կրում, որ դժուար թալկին, թիրաքեան,
զրամական պէտքերի ճնշման ներքոյ, կարող է
այնպիսի բայելք անել, որոնք կը հակասեն յի-
շեալ պետութիւնների քաղաքական նպատակնե-
րին:

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 օգոստոսի: Այսօր Պալատի
գիտարանը ամենի իր յիսնամեայ յօրեկեանը:

ՎԻԵՆՆԱ, 7 օգոստոսի: Երեկ պատեղ հասաւ
Սերբիայի նախկին թագաւոր Միլան:

ԲԵԼԳՐԱԿ, 7 օգոստոսի: Թագուհին մերժեց իր

օրդոն հետ արտասահմանում տեսնվելու առա-
ջարկը և մտադրւում է Բելգրադ գալու: Խնամա-
կայիներին ուղղած նամակով Միւսանը յայտնում է
թէ ինքը համաձայն է, որ թագուհին գար Բել-
գրադ, որ նրան ցոյց տրվէր թագաւորական պա-
տիւ, և որ նա իջնէր պալատում, ցոյց ալն պալ-
մանով, որ տեսակցութիւնները կարճատե և ի-
նքն, որ առաջին անգամ Բելգրադ գալը զեկ-
տեմբերից առաջ չը լինի, և որ այժմ թագուհին
ընդունէր օրդոն հետ կիշինելով տեսնվելու ա-
ռաջարկը՝ կառավարութեան թոյլտւութեամբ:
Այդ առաջարկութիւնները հաղորդված են թա-
գուհուն:

Ս. ՊԵՏԵՐԲՈՐԳԻ ԲՈՐՈՍԱ

Օգոստոսի 4-ին	
Լոնդոնի վրա 10 ֆունտ արծեւ	96 ր. 20 >
Բերլինի վրա 100 մարկ	47 > 10 >
Փարիզի վրա 100 ֆրանկ	38 > 10 >
Ռուսի	արծեւ 7 > 66 >
Մարաշի կուպոններ	153 > 50 >
Արծաթ	1 > 12 >
Բորսայի գլխաւորներ	6 և 70%
Պետական 50/0 ասու 1-ին շրջանի	98 > 75 >
— 2-րդ —	98 > 75 >
— 3-րդ —	98 > 50 >
— 4-րդ —	98 > 50 >
— 5-րդ —	98 > 50 >
— 6-րդ —	99 > — >
Նոր 40/0	83 > 25 >
Լոնդոնի 50/0 փոխաւոր 1-ին շրջ.	98 > 62 >
— 2-րդ —	98 > 62 >
— 3-րդ —	98 > 62 >
Ներքին 50/0 ասու 1-ին փոխաւոր	264 > — >
— 2-րդ —	246 > 25 >
— 3-րդ —	102 > 50 >
— 4-րդ —	172 > — >
— 5-րդ —	141 > — >
Նոր երկարութեային 1-ին	98 > 87 >
50/0 գրաւակ 1-ին շրջանի կուպոն	— > — >
— 2-րդ —	146 > 50 >
— 3-րդ —	92 > 37 >
— 4-րդ —	98 > 25 >
— 5-րդ —	102 > 50 >
— 6-րդ —	27 և 43 97 > 50 >
— 7-րդ —	18 և 43 97 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդոն	95 > — >
— 2-րդ —	98 > 87 >
— 3-րդ —	93 > 75 >
— 4-րդ —	83 > 50 >
Ս. Պետերբուրգի քաղաքային օրդոն	— > — >

ՊԵՏԵՐԲՈՐԳ, 7 օգոստոսի: Սալոնի Պալատի
գիտարանը ամենի իր յիսնամեայ յօրեկեանը:

ՎԻԵՆՆԱ, 7 օգոստոսի: Երեկ պատեղ հասաւ
Սերբիայի նախկին թագաւոր Միլան:

ԲԵԼԳՐԱԿ, 7 օգոստոսի: Թագուհին մերժեց իր

Յ Ա Յ Տ Ա Ր Ա Ր Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՊԱՐԱԿԱՍՏԱՆԻ ՄԱՐԱԶԱ ԲԱԶԱՔԻ ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՈՒՄ
ԲԱՑՎԱԾ Է ԳՐԱԴԱՐԱՆ:

Գրադարանը չունենալով սեփական միջոցներ, զիմում է յարգելի հեղինակներին,
թարգմանիչներին և ուրիշ անձանց, խնդրելով օգնել զրադարանին թէ զրբեր նուիրե-
լով և թէ զրամական նուէրներ անելով: Յանկացողները թէ զրբերը և թէ զրամական
նուէրները կարող են յանձնել Թիֆլիսում Կնտրոնական զրադարանին, ուր և այդ
բոլորը կը մտցնվին թաւրիկի հայոց առաջնորդից սուսած ժապաւինեալ մատանի մէջ:
1—10

Թողնելով իմ պաշտօնը և ՀԵՌԱՆԱՌՈՎ ԶԻԹԱԹՈՎԻ ԲԱՆԿԱՑԻՆ ԳՐԱՆԵՆԱԿԻՑ,
ԽՆԴՐՈՒՄ ԵՄ ԻՆՁ ՀԵՏ ԳՐԹ ՈՒՆԵՆՍԻ ԾԱՆԿԱՑՈՂՆԵՐԻՆ զիմել ինձ հետեւեալ հա-
ցնով. Սերբերեանի լեւոյ, տուն Մէրօրօվի Ն 24:
Կարապետ Սարգսեան Հաջի-Մահմուդեան:
1—2

Մարմին մասերը, մանաւանդ ոտների մասերը
խոնկաց պահպանող փոշի

ԳԱԼՄԱՆԻՆ

ձախլում է զեղաններում և կրօնատների մօտ
Եւրոպայի նշանաւոր քաղաքներում և կայսրու-
թեան բոլոր քաղաքներում: ԳԼԽԱՌՈՐ ՊԱՆՏՈՑ
գտնվում է ՎԱՐՇԱՎԱՑՈՒՄ, հնարգի, զեղատան
տիրոջ, Փարմայիայի մարգարի Վ. ԿԱՐՊԻՆՍԿԻ
մօտ, Էլեկտրայիայի փողոց, Ն 39. Գալմանի
մէծ արկը արծեւ վարչապետ 50 կ, փոքրը
30 կոպ:

ՊԵՏԻ Է ԶԳՈՒՇԱՆԱԼ ԿԵԼՏՈՒՄՆԵՐԻՑ
և պահանջներ, որ իւրաքանչիւր արկը կրէր փո-
շու զօրեւորութեան բազմաթիւնը և փարիզի
ցուցահանդիսի մեղաները:
Ս. 24869 6—10 (b)

В редакцию газеты „МШАКЪ“ прода-
ются следующие брошюры: 1) „Экономич-
Положение Турецких Армян“, публич-
лекция Д—ра Г. Арцруни, перев. съ арм.
А. Аракелянца. Цѣна 25 к. 2) Die Eco-
nomische Lage der Armenier in der Türkei,
ein öffentl. Vortrag von Dr. Grigor Arzruni,
übersetzt von A. Amiranjanjanz. Preis 25 k.
3) Die Hungersnoth in Türkisch-Armenien,
ein Vortrag von Dr. Grigor Arzruni, über-
setzt von Amiranjanjanz. Preis 20 kop.
Иногородные, желающие получить бро-
шюры, благоволить присылать по 30 коп.
почтовыми марками, за каждую брошюру.
Адресъ. Тифлисъ, Редакция „Мшакъ“,
или Tiflis, Redaction „Mschak“. (b)

ԱՐՏԵՄ ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍԵԱՆ, ՄԱԿԱ ԵՒ ԱԼԻՔՍԱՆԴՐ ՍՏԵՓԱՆԵԱՆՆԵՐԸ արար
ցաւով յայտնելով առաջինը՝ իր ամուսնու, երկրորդը իր աղջկայ, իսկ երրորդը իր
քրոջ՝ ՆՈՒՆԷ ՏԵՐ-ԱՆԴՐԵԱՍԵԱՆԻ մահը, խնդրում են ազգականներին և ծանօթ-
ներին ներկայ լինել յուզարկաւորութեան, որ տեղի կունենայ երեքշաբթի օր, օ-
գոստոսի 8-ին, առաւօտեան 10 ժամին, հանգուցեալի բնակարանից (Կօրեան-
սկայա փողոց, ա. Արէշովի) զեպի Մոզնու Ս. Գեօրգ եկեղեցին:
1—1

С. А. ЕПАЗАРОВЪ
ИЗСЛЕДОВАНИЯ ПО ИСТОРИИ УЧРЕЖДЕ-
НИЙ ВЪ ЗАКАВКАЗЬИ
ЧАСТЬ I
СЕЛЬСКАЯ ОБЩИНА
Сословный строй, внутренняя организация и управление общины въ сны-
и съ землевладѣніемъ, водовладѣніемъ и податнымъ обложеніемъ.
Цѣна 2 р. 75 к.
Продается въ Казани, въ книжномъ магазинѣ А. А. Дубровина.
5—10 (b)

Լոյս տեսաւ մամուլի տակից
ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ
Նոր ուխտի, աշխատարկութիւն Սահակ քահանայ Սահակեանցի: Գինն է 35 կ. Նոյն անձի
աշխատարկութեամբ լոյս են տեսել
2) ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏՄՈՒԹԻՒՆ հին ուխտի, գինն է 30 կոպ.
3) ԴԱՍԱԳԻՐԿ ԿՐՈՒՆԻ հին ուխտի, գինն է 1—75 կ.
4) ՄԻ ՔԱՆԻ ԽՕՍԳ հայ կրօնաւորների, գինն է 10 կոպ.
Գինն Թիֆլիսի Կնտրոնական զրադարանին:
5—10

ՄԻ ՕՐԻՈՐԴ՝ որ աւարտել է քաղաքային պրօֆեսիոնալ դպրոցում, ցանկա-
նում է հայոց ծխական դպրոցներում ՁԵՌԱԳՈՐԾԻ դասեր տալ: Հասցեն կարելի է ի-
մանալ „Մշակի“ խմբագրատանը:
2—5

ՄԻԵԻՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ
Ե Ր Կ Ո Ւ Ս Ե Ռ Ի Ա Ն Ձ Ա Ն Ց Հ Ա Մ Ա Ր
ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ
Առևտրական Կուրսերի նպատակն է՝ մասնադիտական առևտրական կրթու-
թիւն տալ երկու սեռի անձանց և պատրաստել զործնական ճանապարհով
հմուտ հաշուապահներ: Աւարտողները ստանում են ատտեստատներ:
Աւանդելի առարկայք սորա են՝ 1) Առևտրական հետեւութիւն, 2) Առևտրա-
կան թուաբանութիւն, 3) Հաշուապահութիւն (պարզ, կրկնակի և բանկա-
յին), 4) Թուաբանութիւն համընթիւ վրա, 5) Առևտրական թղթակցութիւն, 6)
Առևտրական և մուհհակի կանոնադրութիւն և 7) զեղադրութիւն:
Ուսումը սկսվելու է սեպտեմբերի 15-ից, բնդունելութիւնները սեպտեմբերի
1-ից, ամենայն օր, երեկոցեան 4-ից մինչև 8 ժամը, կուրսեր հիմնողի բնա-
կարանում, Ստորական Ազգեքանդր ֆրիդուսովի տանը, Ն 9 Սերգեյեւսկայա և
Նազարեայա փողոցների անկիւնում, զեղատան գիմնաց քրադիրը ու կանոնները
կարելի է ստանալ ԶՐԻԱՊԷՍ եղբ. Ծովանոսիների բանկային զրադարանում և
կուրսեր հիմնողի բնակարանում: Ուարաքաղաքացիք զիմում են կուրսերի հիմ-
նողին.— въ Тифлисѣ, С. П. Мануэляну.
9—20 (b. 6.)

ՇԵՐԱՄԱՊԱՀԱԿԱՆ ՄԵԾ ԳՈՐԾԱՐԱՆՆԵՐ
ՄՈՒՏԻՑԱՌՈՒՄ (Կորիկա կղզի) և ՎԻԳՆՈՒՆԻՄ (Գար)
ՇԵՐԱՄԻ ՑԷԼԻԿԻԼԵՐ ՍԵՐՍԵՐ (ՊԱՍՏԵՐԻ ՍԻՆՍԵՐ)
BERTRAND ET ALOISI
Médaille d'Or 1^{re} Classe
Bariame (Gorne) 1878.
Médaille d'Or 1^{re} Classe
Bariame (Gorne) 1878.
Médaille d'Or 1^{re} Classe
Montpellier 1885.
Médaille d'Or 1^{re} Classe
Montpellier 1885.
ԴԵԼԻՆ ԵՒ ՍՊԻՏԱԿ ԿՈԿՈՆԵՐ
Bertrand et Aloisi սերբերը գնելու համար զիմել Թիֆլիսի շերամապահական կայարանը,
սկսած 1889 թվի հոկտեմբեր ամսից:
6—10